



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

07 *Տեղափոխ* 2017 թ. № 78 - Ա/1

ք. Երևան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «ժ.1» կետերի՝ *հրամայում եմ՝*

1. Հաստատել՝

1) Հանրապետական ուսանողական մարզական խաղերի (այսուհետ՝ Խաղեր)
կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01
խմբի 01 դասի «20. Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում»
ծրագրի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի
Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ
Ասրյանին:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հանրապետական ուսանողական մարզական խաղերի (այսուհետ՝ Խաղեր) նպատակներն են՝

1) ուսանողության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում.

2) ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում:

2. Խաղերի խնդիրներն են՝

1) ուսանողության շրջանում առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին ուսանողության ներգրավվում.

2) ուսանողության շրջանում ֆիզիկական պատրաստվածության բարելավում, նրանց աշխատունակության բարձրացում, առողջության ամրապնդում:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

3. Խաղերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

1) Եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը՝ ըստ մարզաձևերի, կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը, իսկ Խաղերի եզրափակիչ փուլի կազմակերպչական աշխատանքները՝ համակարգում է Նախարարության կողմից ստեղծված կազմակերպչական կոմիտեն:

2) Խաղերի անցկացմանը աջակցում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիան:

4. Խաղերն անցկացվում են 2 փուլով՝

1) **1-ին փուլում** բարձրագույն ուսումնական հաստատություններում **բասկետբոլ** (տղաներ, աղջիկներ), **վոլեյբոլ** (տղաներ, աղջիկներ), **ֆուտզալ** (տղաներ) մարզաձևերում 1-ին տեղը զբաղեցրած թիմը կմասնակցի եզրափակիչ՝ հանրապետական փուլին, իսկ **հրաձգություն օդամղիչ հրացանով** և **հնգամարտ** մարզաձևերից (տղաներ, աղջիկներ) 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած մարզիկները կմասնակցեն եզրափակիչ՝ հանրապետական փուլին: